Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

- պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
- ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

- **Share** — copy and redistribute the material in any medium or format
- **Adapt** — remix, transform, and build upon the material

23189

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՔՎԱԾ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ
ԱԼԼԱՀՎԵՐԴՈՒ ԶԱԿՄԵԴԿՈՄԲԻՆԱՏԻ
ՄԻՋԵՎ

1931

33111
Ա-89
Ար
05 JAN 2010

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ԿՆՔՎԱԾ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱԼԼԱՎԵՐԴՈՒ ՋԱԿՄԵԴԿՈՄԲԻՆԱՏԻ ՄԻՋԵՎ

ՀԽՍՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1931

12422-57

25 FEB 2013

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

1. Սույն հավաքական պայմանագիրը կնքվում է մեկ կողմից Հայաստանի կառուցող բանվորների անունից Կառուցողների Արհմիության կենտրոնական վարչության, վորը հետագայում կոչվելու է «ՄԻՈՒԹՅՈՒՆ» հանձինս նրա անդամ՝ Ս. Բաղդասարյանի, մյուս կողմից Ալլահվերդու Զակ-Մեդ. կոմբինատի դիրեկտորի (Ալլահվերդի, Ղափան) հանձինս նրա դիրեկտորի տեղակալ Լ. Մ. Ղազարյանի, վորը հետագայում կոչվելու է «ՏՆՏՄԱՐՄԻՆ» միջև։

2. Սույն հավաքական պայմանագրի նպատակն է ապահովելու բանվոր դասակարգի առաջ դրված խնդիրների ավելի քան արագ կերպով կատարումն, Ժողովրդական Տընտեսության Վերակառուցման, յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բնագավառներում, ու անշեղորեն և արագ կերպով բարելավելու ՀՍԽՀ կառուցող բանվորների

և ծառայողների նյութական կուլտուրական կրթության և սոց–կենցաղային պայմանները:

3. Ըստ սույն հավաքական պայմանագրի 2–րդ կետի Զակկոմբինատի շինարարական աշխատանքների վրա Ալլահվերդում և Ղափանում զբաղված վարչատնտեսական կազմը, բոլոր ճարտարապետ–տեխնիկ աշխատավորները և բանվոր–ծառայողները իրենց վրա պարտավորություն են վերցնում լրիվ կերպով կատարելու և գերակատարելու 1931 թ. արդֆինպլաններով նախատեսնված քանակային և որակական ցուցանիշները, արտադրության պրոցեսների ճիշտ կազմակերպմամբ, հարվածային աշխատանքների մեթոդի կազմակերպմամբ պրոլետարական դիսցիպլինայի ամրացմամբ և ունենալ կոմունիստական վերաբերմունք դեպի աշխատանքները, դրա հետ միասին Տնտմարմինը պարտավորվում է ապահովել անհրաժեշտ արտադրական պայմանները, այդ խնդիրները ի կատար ածելու, ինչպես և պարտավոր է անպայման և իր ժամանակին կատարելու սույն պայմանագրի բոլոր կետերը, աշխատավարձի կարգավորման աշխատանքի իրավական պայմանների վերաբերյալ, միաժամանակ աջակցելու բարելավելու բանվորների կուլտուրական, սոց–կենցաղային և բնակարանային պայմանները:



4. 1931 թ. վարչությունը պարտավորվում է կիրառել հետեվյալ միջոցառումները՝

ա) Տնտեսական տարվա առաջին ամսից իսկ ապահովել արտադրության զարգացումը, համաձայն արդֆինպլաններով նախատեսված չափի:

բ) Արդֆիպլանը ստանալուց 15 օրվա ընթացքում արդֆինպլանը հասցնել կառուցվող շենքերին, գործարաններին և ցեխերին, իսկ 20 օրվա ընթացքում հասցնելու այն մինչեվ ագրեգատը, ստանոկը և անհատ բանվորը:

գ) Արդֆինպլանով նախատեսնված ռացիոնալացման միջոցները կիրառելու հետ զուգընթաց պարտավոր է տնտեսական տարվա ընթացքում կիրառել նաև այն միջոցները, վորպիսիք կառաջադրվեն բանվորների, ճարտ–տեխնիկների և ուբիչների կողմից, ոժանդակելու պլանի գերակատարմանը. միևնույն ժամանակ առանց հետաձգելու կիրառել կյանքում բանվորների գյուտարարությունները:

դ) Սույն հավաքական պայմանագիրը

ստորագրելուց ......օրվա ընթացքում վորոշել գործադրվող չինանյութերի, հումույթի, վառելիքի և էլեկտրոէներգիայի չափը և կազմակերպել ներքին հսկողություն վորոշված նորմաների կատարման և նյութերի պատրաստված գործի վորակը ստուգելու համար:

ե) Կազմակերպել պլանային աշխատանք կորուստների դեմ պայքար մղելու թե արդյունաբերության և թե շինարարության մեջ:

զ) 30 օրվա ընթացքում մշակել հրահանգ տասնապետների, ցեխային վարպետների և նրանց օգնականների իրավունքների ու պարտականությունների մասին, միանձնյա ղեկավարության սկզբունքը կիրառելու նպատակով, միաժամանակ ուժեղացնել վարչական և տեխնիկական աշխատավորների պատասխանատվությունը, ինչպես շինարարության և գործարանում գրաված բանվորների մեջ, իրենց հանձնարարված աշխատանքները կատարելու հանդեպ:

է) Ապահովել սույն պայմանագրով նախատեսնված բոլոր աշխատանքների կատարումը մասնավորապես աշխատավարձի, աշխպաշտպանության պայմանները և աշ-



խատավորների աշխատանքի պայմանների առողջացման գործը:

ը) Վոչ ուշ ամեն ամիս 28-ից տալ հետեվյալ ամսի արտադրական աշխատանքի պլանը բոլոր ցեխերին և ամեն մի հնգօրյակի սկսվելուց առաջ նույնը տալ բրիգադներին և բանվորական ավելի փոքր միավորներին:

թ) Սոցֆինպլանով նախատեսված ռացիոնալացման միջոցների գործադրելու հետ զուգընթաց անպայման գործադրել նաև այն միջոցները, վորոնք սույն պայմանագրի գործելու ընթացքում կառաջարկվեն բանվորների և ճար. տեխնիկ աշխատակիցների կողմից, և վորպիսի առաջադրանքները հավանություն գտած կլինեն Վարչության կողմից:

ժ) Կազմակերպչական և տեխնիքական օժանդակություն ցույց տալ հետագայում ավելի ևս ծավալելու և ամրացնելու սոցմըրցումը և հարվածայնությունը:

ժա) 30 օրվա ժամանակի ընթացքում կազմակերպել պլանային հետախուզական աշխատանքներ, տեխն. նորմիրովկայի բյուրոյի համար արտադրության ռացիոնալացման, արտադրողականության բարձրացման և աշխատանքները նորմիրովկայի յենթարկելու նպատակով:

ժբ) Ապահովել շինարարական աշխատանքները ամբողջ տարվա ընթացքում, ստեղծել մշտական բանվորական կադր և ուժեղացնել աշխատանքների մեքենայացումը և ստանդարտիզացիա մտցնել շինարարության մեջ. շինարարական ժամանակի ամբողջ ընթացքում ձգտել ապահովելու շինանյութերի անընդհատ մատակարարումը, բանուժի ռացիոնալ օգտագործումը, ինչպես և ներքին միջոցների օգտագործումը:

ժգ) Սոցմրցման և հարվածայնության հետագա զարգացման համար միջոցներ ստեղծել, առաջին հերթին տալով հարվածայիններին ամենալավ հնարավորությունները:

ժդ) Բաց թողնել անհրաժեշտ միջոցներ բանվորների վորակը բարձրացնելու համար:

ժե) Կատարել ճիշտ և կանոնավոր հաշվառում սոցմրցման և արտադրողականության բարձրացման, ցուցադրելով ստացված էֆֆեկտները:

Ծանոթություն 1. — Տնտմարմինները պարտավոր են կազմակերպել հարվածային բրիգադներ այն հաշվով, վոր համապատասխան վորակի խմբեր կազմակերպվեն:

2. Շինարարական հետ ընկած կարևոր միավորներին ոժանդակելու համար վարչությունը կազմակերպել և հարվածային բրիգադներ տվյալ շինարարության լավագույն հարվածայիններից:



## ԳՈՐԾԱՐԿՈՄԸ ՊԱՐՏԱՎՈՐ Ե՝

ա) Վճռական կերպով ամրապնդել աշխդիսցիպլինան, պայքարել պրոգուլների, պոկողականության դեմ, աշխդիսցիպլինի խախտողների և բանուժի հոսունության դեմ:

բ) Պարբերաբար լսել արդֆինպլանի կատարման քանակական և վորակական ցուցանիշներին, վորի համար յենթարկել մոբիլիզացիայի ձեռնարկության ամբողջ բանվորությանը, սոցմրցման ու հարվածայնության ծավալման և ամրացման, ինչպես և արտադրական խորհրդակցությունների ու գյուտարարության միջոցներով:

գ) Գործարանի վարչության հետ միասին կազմել և պարբերաբար ինֆորմացիա տալ բանվորությանը սոցմրցման ու հարվածայնության ընթացքի մասին: Գործնական ոժանդակություն ցույց տալ վարչությանը հետամնաց շինարարական մասերին ոգնելու գործում, վերացնելով արդֆինպլանների իրագործման բոլոր դժվարությունները:

դ) Իրագործել և կազմակերպել մասսաների հսկողությունը յերկու կողմերի վրա ևս, սույն հավաքական պայմանագրի համաձայն նրանց հանձնարարած պարտավորությունների ճիշտ կատարման համար ձեռք առնելով ամեն տեսակի միջոցներ պայմանը խախտող կողմերի և անհատների վերաբերմամբ:

Կողմերը պարտավորում են պլանի կողմերը վորևե վտանգ սպառնալու դեպքում, միասին ձեռք առնեն կոնկրետ միջոցներ արդֆինպլանների կատարման ամեն տեսակի խոչընդոտները վերացնելու և նրա կատարումը ապահովելու:

## ԳՈՐԾԱՐԿՈՄԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

Հարվածային բրիգադներին պարբերաբար հրահանգել և ղեկավարել. ՃՏՍ-ի միջոցով կազմակերպել հարվածայինների և սոցմրցման մասնակցելու համար տեխնիքական ուժանդակություն: Կազմակերպել խմբակային արտ-խորհրդակցություններ և ճարտ-տեխնիկ աշխատավորների ու վարչության մասնակցությունը այդ խորհրդակցություններում ապահովել: Ճարտ-տեխնիկական աշխատավորներն ել իրենց հերթին պարտավոր են իրենց խմբակների արտադրական



խորհրդակցություններին ել մասնակցել թե անհատական թե խմբակի հետ միասին մրցման մեջ մտնել արտադրական խնդիրների և ռացիոնալացման լավագույն կատարելու համար:

Ճ. Տ. բոլոր աշխատակիցները, բանվորները և ծառայողները, վորոնք ավարտել են այս կամ այն վորակավորման դասընթացները, պարտավոր են տվյալ ձեռնարկությունում աշխատել վոչ պակաս.... տարուց:

5. Բանվորները և ծառայողները իրենց հերթին պարտավոր են՝

ա) Միանգամայն վերացնել առանց հարգելի պատճառների կրկնելու պրոգուլները, լրիվ ոգտագործել բանվորական որը, ձգտել գերակատարելու տրված արտադրական պլանը միաժամանակ լավացնելով գործի վորակը:

բ) Կահավորությունը և գործիքները լավ պահպանել, տնտեսաբար գործադրել հումույթը և նյութերը, թույլ չտալ սահմանված չափից ավելի ծախսել բանուժը, նյութերը, հումույթը և այլն:

գ) Ամեն կերպ բարձրացնել արտադրական վորակը, բարեխիղճ վերաբերմունքի շնորհիվ վերացնել բրակը և փոխադարձ հսկողություն ունենալ միմյանց վրա:

դ) Վարչության կարգադրությունը ժամանակին կատարելով, աջակցել միանձնյա ղեկավարության սկզբունքի կիրառմանը:

յե) Պարբերաբար բարձրացնել իր վորակը, հաճախելով պոլիտեխնիքական դասընթացքներ, դպրոցներ, խմբակներ և այլն:

զ) Անպայման կատարել ներքին կարգապահության կանոնները:

ե) Մինչև տարվա վերջը իր ցանկությամբ չթողնել գործարանը, ձեռնարկությունը կամ շենքը և պայքար տանել շուտ շուտ տեղից տեղ փոխադրվողների դեմ: Բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը 33 տոկոսով ինքնարժեքը իջեցնել 15 և 11,5 տոկոսով աշխատավարձը 4 տոկոսով բարձրացնելու համար:

թ) Վերացնել բանվորների մեղքով առաջացած բրակ աշխատանքները և նրանց չինելու յերևույթը:

6. Սույն հավաքական պայմանագիրը տարածվում է ձեռնարկությունների կամ շենքում աշխատող բոլոր բանվորների և աշխատավորների վրա և թե պայմանագրի գործելու ընթացքում նոր ընդունվողների վրա, ինչպես և նույն ժամանակաշրջանում նոր սկսվելիք ձեռնարկությունների վրա, անկախ



վարձելու ժամանակամիջոցից Ալլահվերդում և Զանգեզուրում:

Ծանոթություն.— Ժամանակավորապես աշխատողների վրա պայմանագրի փոխարեն տարածվում են գործող օրենքները (Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1927 թ. հունվարի 14-ի վորոշումը): Շինարարության մեջ աշխատող մնացած բոլորի վրա սույն պայմանագիրը տարածվում է, նույնիսկ յեթե նրանք վարձված են ժամանակավորապես

7. Ժամանակավոր աշխատավոր վարձելու դեպքում վարչությունը պարտավոր է գրավոր ձեվով հայտնել աշխատողին ժամանակամիջոցի մասին:

8. Հավաքական պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամանակով, սկսած 1931 թ. հունվարի 1-ից մինչև 1931 թ. դեկտեմբերի 31-ը: Այս պայմնագրի ուժի մեջ մտնելուց սկսած 1929-30 թ. նախկին պյամանագիրը կորցնում է իր ուժը:

9. Պայմանագրի գործելու ժամանակամիջոցում նրա առանձին կետերը կամ մասերը կարող են փոփոխության յենթարկվել միմիայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Հետին թվով չի թույլատրվում այնպիսի փոփոխություն մտցնել սույն պայմանագրի մեջ, վորը վատացնում է աշխատանքի պայմանները: Եթե մինչև սույն պայմանագրի ժամանակամիջոցը լրանալը, նոր հավաքական պայմանագիր չի կնքվում բանվոր ծառայողների աշխատանքի պայմանները կարգավորելու յեն սույն պայմանագրով:

Աշխատանքի պայմանների բարելավումը վորը նախատեսվելու յե նոր պայմանագրի մեջ, ուժի մեջ են մտնում նոր պայմանագրի գործելու օրից:

## ԿԱԴՐԵՐ

10. Ազատ պաշտոնների կամ աշխատանքի տեղերը, ինչպես և նոր ընդունելություններ կատարելու դեպքում, վարչությունը պարտավոր է առաջին հերթին առաջ քաշել ավելի վորակյալ հարվածայիններին, թե բանվորներից և թե ծառայողներից, վորոնք պատրաստվել են տվյալ աշխատանքի համար, առաջնությունը տալով վորակյալներին և տվյալ ձեռնարկություններում ավելի յերկար ժամանակ աշխատողներին:

11. Բանվորների և ծառայողների ընդունելությունները կատարվելու են միմիայն Աշխժողկոմի կադրերի վարչության և նրա տեղական մարմինների միջոցով: Վերջինս հրաժարվելու դեպքում, վարչությունը կարող է կողմնակի մարդկանց ընդունել և այդպիսի ամեն մի ընդունելը նախօրոք պիտի համաձայնեցնել գործարկոմի կամ բանկոմի հետ:

Առաջին հերթին ընդունվում են աշխատանքի՝

ա) Արհմիության անդամները և նրանց հետ հավասարեցվածները:

բ) Հարվածայինների վորդիները, անչափահասները, կանայք, քույրերը և յեղբայրները, իսկ վոչ հարվածայիններից նրանք, վորոնք վոչ պակաս յերեք տարուց աշխատել են տվյալ ձեռնարկությունում: Բացի այդ Տնտմարմինը պարտավոր է առաջին հերթին ընդունել չին. աշխատանքի այն բանվորներին, վորոնք ավարտել են կենտրոնական ինստիտուտը (ՍՆՏ) ուղարկված են աշխատանքի Աշխժողկոմատի օրգանների կողմից, համաձայն տնտմարմնի պահանջի:

Անկախ Աշխժողկոմատի կադրերի վարչությունից գործարկոմի կամ բանկոմխմբկոմի համաձայնությամբ, կարելի յե ընդունել հետևյալ պաշտոնյաներին (տես կցված ցուցակը):

12. Ամեն մի նոր ընդունվող բանվոր-ծա-

ռայողի վերաբերյալ գործարկումը կարող է բողոքարկել այդ մասին վարչությունից հայտարարություն ստանալուց 3 օրվա ընթացքում:

Յեթե վարչությունը չի հարգում բանկոմի կամ գործարկոմի բողոքը, գործը հանձնըվում է Գ.Կ.Հ.-ին քննության և վերջինի վորոշումը պարտադիր է կողմերի համար, մինչեվ վեճի լուծումը վարչության կարգադրությունը ուժի մեջ է:

13. Ճարտ. տեխ. այն աշխատավորների ընդունելությունները, վորոնք իրենց ցանկությամբ փոխադրվում են մի ուրիշ ձեռնարկությունից, թույլ է տրվում միայն բանկոմ խմբկոմի համաձայնությամբ և նախկին աշխատանքի վայրից գրավոր համաձայնություն և թույլտվությունը ներկայացնելուց հետո:

14. Աշխժողկոմատի կադրերի վարչության գործուղած աշխատավորին կարելի յե ընդունել կամ փորձնական աշխատանքի տալ հետեվյալ կարգով՝

Ներկայանալու րոպեյից հաշված մինչև 7 ժամը, իսկ յեթե այդ ժամանակից ուշ է ներկայացել, վոչ ուշ հետեյալ բանվորական օրից: Յեթե այդ ժամանակամիջոցում նրան աշխատանք չհանձնեն կամ փորձնական աշխատանք չտան, վարչությունը պարտա-



վոր է վճարել նրան ներկայանալու րոպեյից սկսած մինչեվ գործ հանձնելը, կամ աշխբաժնին հետ ուղարկելը: Այդ ժամանակամիջոցի համար տրվում է աշխատավարձ այն կարգով, ինչ կարգի պահանջ ներկայացրել է կադրերի վարչությունը, իսկ յեթե պահանջագրի մեջ հիշատակված չի լինի, պետք է վճարել այն կարգի համաձայն, ինչ գործի համար վոր ուղարկված է կադրերի վարչությունից:

15. Աշխատավարձ չի վճարվում, յեթե ուղարկված որը տնտմարմինը մերժել է ընդունել և հայտնում է անհամապատասխան լինելու մասին Աշխժողկոմատի կադրերի վարչության:

16. Գործի ընդունելու համար փորձնական աշխատանք տալու ժամկետը վորոշվում է՝

Բանվորների համար 6 բանվորական օր.

Գրասենյակային և հաշվային ծառայողների համար մինչև ավագ հաշվապահները՝ 12 բանվորական օր, ավելի բարձր հաշվային գրասենյակային և ճարտ. տեխ. աշխատավորների նկատմամբ 24 բանվորական օր:

Այն բանվոր-ծառայողները, վորոնք մնում են աշխատանքում փորձնական աշխատանքի համար սահմանված օրերից ավելի, համարվում են ընդունված: Անչափահասների բրո-

Гос. ... библиотека
ՀՍՍՀ—ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
12427-52

նիան սահմանվում է՝ 15 հ. Ալլահվերդիի և 10 հ. Զանգեզուրի համար:

17. Բրոնիայի թիվը պետք է լրացնել մինչև 1-ը մայիսի, ըստ վորում առաջին հերթին պետք է ընդունել հարվածայինների վորդիներին և այն բանվորների վորդիներին, վորոնք յերկար ժամանակ աշխատել **են տվյալ** Տնտմարմնի մոտ և ինչպես այդ արժեքավոր առաջարկներ անողների վորդիներին, նախկին պարտիզաններին, աշխատանքի հերոսների վորդիներին և մանկատան սաներին:

Տնտմարմինը պարտավոր է անչափահասներին ընդունելուն պես տրամադրել հանրակացարան և արհեստանոցներ աշխատելու համար:

Բոլոր անչափահասներին պետք է տեղավորել շինություններում սովորելու: Արգելվում է և աշխատանքներ հանձնարարել նրանց: Բրիգադային աշակերտությունը կարելի յե պահել միայն այն դեպքում, յերբ շինություններում և Փաբզավուչներում տեղ չի լինում:

18. Բրիգադային սովորելու դեպքում Տնտմարմինը պարտավոր է սովրեցնող բրիգադիրներ նշանակել տեխնիկապես ավելի պատրաստի բանվորներից:

Բրոնյան եվ անհատական կարգով սովորող բոլոր աշակերտությունը պետք է փո-



խադրվեն Շինուսի դպրոցներում բրիգադաներում սովորելու համար վոչ ուշ մեկը մայիսի 1931 թ.

19. Վարչությունը պարտավոր է լրիվ ապահովել սովորողներին գործիքներով, դասատուների կազմով և բոլոր նյութերով, վորոնք գործադրվելու յեն նրանց արտադրական պրակտիկայի ընթացքում: Բացի այդ ապահովելու նրանց համապատասխան շենքերով կահավորված և արհեստանոցի սարքավորմամբ:

20. Սովորելու ընթացքում վարչությունը պարտավոր է վեց ամիս մեկ անգամ պարբերաբար վերանայել աշակերտության վորակը և անցկացնել նրանց համաձայն գործնական աշխատանքի ավելի բարձր կարգի: Աշակերտներին թույլ է տրվում ժամկետից առաջ (վեց ամիսը) տալ փորձնական աշխատանք բարձր կարգի անցնելու համար:

Այն աշակերտներին, վորոնք ավարտել են ուսումը, վարչությունը պարտավոր է օգտագործել մշտական աշխատանքներում, իրենց արհեստի մեջ:

21. Ավարտական տարվա 2-րդ կեսում աշակերտներին պետք է թույլ տալ ինքնուրույն աշխատելու արտադրության մեջ, արված աշխատանքը կամ հանձնարարու-

թյունը լինելու յե իր ունեցած արտադրական պրակտիկայի սահմաններում, այն հաշվով, նրա սովորելու վրա վատ չանդրադառնա, այս դեպքում նրան վարձատրում են չափահասների հետ հավասար չափով ըստ գործարքային դրույքներով, իսկ կրճատված ժամերի համար նրանց վճարվում է տարիֆային դրույքներով աշակերտական ցանցի:

Այն աշակերտները, վորոնք աշխատում են գործարքով աշխատող վարպետի մոտ, վորպես յենթավարպետ, ինչպես և գործարքով աշխատող բրիգադայում ստանում են և վերարտադրանքի միջին տոկոսը, համաձայն իրենց տարիֆ դրույքի:

22. Կադրերի պատրաստման համար 1931 թ. արդֆինպլանով նախատեսնված գումարից վարչությունը յերեք ամսվա ժամանակամիջոցում պարտավորվում է կազմակերպել դասընթացներ բանվորների վորակի բարձրացման համար, ապահովելով դասընթացները դասագրքերով և աշակերտներով և ճարտ. տեխ. վորակավորման դասընթացներ, ապահովելով նրանց ևս դասական պիտույքներով և ձեռնարկներով, ծախսելով բաց թողնված գումարները իրենց անմիջական և ուղղակի նպատակների համար: Տեխնիկացիայի ակումբներով լրացուցիչ կրթու-



թյուն ստանալու համար մշակել համապատասխան ծրագիր:

23. Վորակը բարձրացնելու համար սովորող բանվորներին վճարվելու է աշխատավարձ հետեվյալ կարգով՝

ա) Տվյալ ձեռնարկության սև աշխատավորներին և անվորակ բանվորներին, վորոնք վորակավորման նպատակով ազատված են աշխատանքներից վորոշ ժամերով, վարձը տրվելու յե գործարքի գնացուցակներով, վոչ պակաս իր տարիֆային դրույքից, վորը վերավորակավորվելուց հետո պետք է ստանա:

Ծանոթություն.— Կենտրոնական Աշխ. Ինստիտուտի (ՑԻՏ) կուրսերն ավարտողներին, վորոնք այնպիսի աշխատանք են կատարում, վոր չի արդարացնում համապատասխան նորման, առաջին յերկու ամսում պետք է ապահովել տարիֆ դրույքով: Հետագայում նույնպես չարդարացնելու դեպքում, ապահովելը չպետք է անցնի տարիֆ դրույքի $2/3$-ից:

24. Վորակավորման դասընթացներ ավարտած ճարտ. տեխ. աշխատավորները, ծառայողները, ինչպես և այն աշակերտները, վորոնք սովորել են շինումներում, պարտավոր են աշխատել տվյալ ձեռնարկությունում

վոչ պակաս մեկ տարի ժամանակից:
25. Գործարքով աշխատող վորակյալ այ
բանվորները, վորոնք իրենց անմիջական ա
խատանքների հետ զուգընթաց բրիգադայի
կամ անհատական կարգով աշակերտներ ե
ուսուցանում, Տնտմարմինը պարտավոր
այդպիսիներին լրացուցիչ կերպով վարձա
տրել վոչ պակաս սովորող աշակերտների
մշտական աշխատավարձի 15 տոկոսից:
Յեթե աշակերտների ուսուցումը կատար
վում ե բրիգադայի միջոցով ապա բրիգա
դայում յեղած բոլոր վորակյալ բանվոր
ներին (սկսած 4 կարգից) նույնպես Տընտ
մարմնի հաշվին տրվում ե լրացուցիչ վար
ձատրություն սովորող աշակերտների մշ-
տական աշխատավարձի գումարի 15 տոկոս
չափով, վորպիսի գումարը բաժանվում
բրիգադայում աշխատող վորակյալ բանվոր
ների միջև ըստ նրանց տարիֆային կար
գերի:

Ծանոթություն.— 1. Նույն կար
գով վարձատրվում են նաև այն բան
վորները, վորոնց ղեկավարությամ
սովորում են անչափահաս բանվորները

26. Վարչությունը պարտավոր ե 15 բան
վորներ ուղարկել տասնապետական դա
ընթացներ, վորից 5-ը Ղափանից, և ավար
տելուց հետո տալ նրանց շենքերում արտա



ադրական պրակտիկայի տեղեր կամ աշխա-
տանք: Դասընթացներում սովորելու ընթաց-
քում վարչությունը պարտավոր ե ազատել
նրանց աշխատանքից ամսական վեց ժամից
վոչ ավելի: Բացի այդ վարչությունը պար-
տավոր ե ուղարկել տասնապետների տեխնի-
կական կուրսեր և տեխնիկների-ճարտարա-
պետների, իսկ ճարտարապետների վերավո-
րակավորման դասընթացներում սովորելու
աց թողնվող գումարների սահմաններում:

27. Վարչությունը պարտավոր ե արտել-
ների փոխարեն կազմակերպել ցեխային
բրիգադներ, նշանակել բրիգադիրներ, բրի-
գադիրներ նշանակել առաջին հերթին հար-
վածայիններին, լավագույն արտադրական
բանվորներին, արժեքավոր արտ. առաջարկ-
ներ անողներին և գյուտարարներին: Բրի-
գադիրը պարտավոր ե իր բրիգադայի հետ
հավասար աշխատել և ստանալ աշխատա-
վարձ իր ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՀԱՄԱՆԵԼԻՔ ԿԱՐ-
ԳՈՎ: 40 հոգուց ավելի կազմով բրիգադա-
յի համար թույլ ե տրվում ունենալ ազատ
բրիգադիր, Տնտմարմնի հաշվով, վորը ստա-
նալու յե կրտսեր տասնապետի դրույքով,
սակայն վոչ պակաս իր բրիգադայում ստա-
ցած միջին աշխատավարձից:

Տնտմարմինը պարտավոր ե հատուկ

դասընթացներում պատրաստել բրիգադիրներ:

28. Բանվոր–ծառայողների կրճատումը կատարվում է վարչության և գործարկոմի նախորոք կայացած համաձայնությամբ: Աշակերտները կրճատման ենթակա չեն, այլ փոխադրվում են ուրիշ ձեռնարկություններ աշխատելու, հաստիքի (շտատի) կրճատման դեպքում, աշխատանքում թողնելու նախապատվությունը տրվում է՝

1. Արհմիության անդամներին.
2. 1931 թ. զինակոչի ենթականերին.
3. Հարվածային բանվոր–ծառայողներին, ինչպես և յերկար ժամանակ տվյալ ձեռնարկությունում աշխատողներին, վորոնք նկատողության կամ տուգանքի տակ ընկած չեն աշխուժխոցխույլինան խախտելու համար:
4. Արտադրական կոմունաների անդամներին.
5. Քաղաքի բանվորներին, վորոնք գյուղական յեկամուտներով չեն օգտվում:
6. Կենտրոնական ինստիտուտ (ՑԻՏ) Ցինուս և յերիտբանվորության դպրոցներ ավարտողներին:
7. Ինքնամրցման պայման կնքողներին:

Ժամանակավորապես աշխատունակությունը կորցրած աշխատավորին արձակելը թույլատրվում է, յեթե այդպիսին 4 ամսից



ավել գործի չի հաճախում (չհաշված հղիություն): Աշխատանքի ընթացքում պատահած դժբախտ պատահարների հետևանքով, ժամանակավորապես աշխատունակությունը կորցրածին արգելվում է հեռացնել մինչև առողջանալը, կամ բժշկական հանձնաժողովի կողմից անաշխատունակության աստիճանը վորոշելը:

30. Բանվոր ծառայողները, վորոնք աշխատում են շինարարության վրա և համաձայն Աշխօրենսգրքի 47 հոդ. «ա», և «բ» կետերի պետք է հեռացվեն, վարչությունը պարտավոր է հեռացնելուց առաջ նախազգուշացնել հետևյալ կարգով՝ մի ամսից պակաս աշխատողին՝ 7 օր առաջ, 6 և 6–ից ավելի աշխատողներին՝ 15 օր առաջ: Հեռացողներին պետք է հայտարարել գրավոր. առնելով նրանից այդ մասին ստորագրություն, բացի այդ պետք է նշանակել հաշվեգրքույկում հեռացման ժամկետը:

31. Վարչության կարգադրությամբ կամ աշխատանքների կրճատման հետևանքով աշխատանքից կրճատվող, օրավարձով և գործարքով աշխատող բանվորների վերջնական հաշիվները պետք է փակել վոչ ուշ կըրճատման հետևյալ օրից, իսկ գործարքով աշխատողների վերջնական հաշիվները պետք

է փակել կրճատման օրից սկսած 3 օրվ
ընթացքում:
Բանվորի արձակման օրը հաշվում է ն
րանց հետ վերջնական հաշիվների օրը, յե
բանվորներին հասանելիք բոլոր տեսա
գումարները վերեվում ընդունված ժամ
Նակամիջոցում լրիվ չվճարվի, բանվորնե
համարվելու յեն աշխատանքի մեջ և մինչ
Նրանց հետ վերջնական հաշիվները փա
ման օրը պետք է վարձատրվեն Տնտմարմ
կողմից, վոչ պակաս նրանց տարիֆայ
դրույքներից:
32. Յեթե բրիգադներում աշխատողնե
50 տոկոսը և ավելին իրենց ցանկությամ
հեռանում են գործից դեռ գործը չվերջա
ցրած, նրանց վճարվում է տարիֆային կա
գով, իսկ վերջնական հաշիվը նրանց հե
պետք է փակել մոտիկ ապագայում, յե
ամբողջ բրիգադան լուծարքի յենթարկե
վի: Հեռացողները, յեթե տվյա
վայրից հեռանում են, լուծարքից հե
Նրանց հասանելիքը Տնտմարմինը
հաշվով փոխադրելու յե թողած հասցենե
համաձայն:
Յեթե Տնտմարմնի կարգադրությամ
բրիգադայի մի մասը հեռացվում է համա
ձայն Աշխօրենսգրքի 47-րդ հոդվածի «ա»
«բ» կետերի, Տնտմարմինը պարտավոր է չ



ել և հաշվել կատարված աշխատանքները
վերջնական հաշիվը փակել նրանց հետ,
ամ համաձայն ..... հոդվածի հաշվել մի-
ն աշխատավարձի չափով:
33. Այն բանվոր ծառայողները, վորոնք ի-
րենց ցանկության համաձայն հեռանում են
գործից, պետք է նախազգուշացնեն 12 օր ա-
ռաջ, նախազգուշացումը կատարվելու յե
որոշ օրերում, վորպիսի օրերը վորոշվում
բանկոմի և վարչության փոխհամաձայ-
նությամբ: Այն բանվորներին, վորոնք չեն նա
խազգուշացրել 12 օր առաջ հեռանալու մա-
սին, տրվում է վերջնական հաշիվ բանվոր-
ների աշխատավարձ ստանալու հերթական
օրը, վճարման հետեվյալ ժամկետի հետ:

## ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

34. Տնտմարմինը իրավունք չունի պահան-
ջել աշխատավորից այնպիսի աշխատանք,
վորը չի վերաբերում նրա արհեստին: Յեթե
համապատասխան աշխատանք չլինի, աշ-
խատողին կարելի յե ուրիշ նման գործ կա-
տարելու, տալով նրան վարձատրություն
համաձայն վերջին աշխատանքի դնահա-
տության, սակայն վոչ պակաս իր տարի-
ֆային դրույքից: Յեթե բանվորին փոխա-
դրում են իր արհեստին բոլորովին անհամա-

պատասխան գործի, վոչ իր վորակի համաձայն, այդ դեպքում նա կարող է ստանա- հեռանալու նպաստը և ազատվել գործից:

35 Գործարքով աշխատող բանվորներ- իրենց աշխատանքները դեռ չվերջացրա- որավարձային աշխատանքի փոխադրվելու դեպքում (մանր կարճատև վորը ավել է ( որից աշխատանքներ կատարելու համար, մինչև նախկին գործարքային աշխատանքի վերադառնալը, որավարձի աշխատանքու- յեղած ժամանակամիջոցի համար վարձատրվում են բրիգադայում յեղած միջին աշխատավարձով:

36. Յեթե բանվոր-ծառայողին շինարարական վորևէ տեղից փոխադրում են մի ուրի- վայր աշխատելու, նրանց վճարվելու յ- փոխադրության ծախքերը, բացի այդ պետ- է վճարել տեղափոխելու օրերի աշխատավարձը, միջին աշխատավարձի չափով:

Յեթե բանվորը այնտեղ աշխատել է վ- ամսից ավելի նրան պետք է վճարել նա- վերադարձի ճանապարհածախսը մինչև ի- նախկին աշխատավայրը, յեթե վերջացրել - տված պատվերը:

37. Տնտմարմինը պարտավոր է այն ձեռնարկներում, ուր աշխատում են 1000 հոգուց



ավելի բանվոր ծառայողներ, պահելու հատուկ պատասխանատու աշխատակից, վորը պետք է զբաղվի միմիայն բանվոր ծառայողներ վարձելու, արձակելու բանվորներին մեկ ցեխից մի այլ ցեխ փոխադրելու գործով և այլն, և վորի թեկնածությունը նախորոք պետք է համաձայնեցնել բանկոմ-խմբկոմի կամ գործարկոմի հետ:

## ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ՅԵՎ ՆՈՐՄԱՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ

38. Բոլոր գործերում կիրառվելու յե ուղղակի գործարքային աշխատանքի ձևը, առանց գերարտադրանքի սահմանափակման, որավարձային աշխատանք թույլատրվում է միայն նորմիրովկայի չյենթարկվող աշխատանքներին:

Ակկորդային աշխատանքներ թույլատրվում է բացառիկ դեպքերում այն էլ միության դիտությամբ և համաձայնությամբ:

39. Տնտմարմինը պարտավոր է սույն պայմանագիրը ստորագրելուց մեկ ամսվա ընթացքում մշակել և համաձայնեցնել միության հետ պարգևատրությունների ձևը և կարգը, ինչպես գործարքով, այնպես էլ այն աշխատանքների համար, վորոնք չեն յենթարկվում նորմիրովկայի, պարգևատրում-

ները կատարում են հետևյալ դեպքերում՝ յերբ նկատվում է արտադրանքի վորակի բարձրացումը, բրակի իջեցումը, նյութերի և հումույթի խնայողաբար գործադրում, պրաստոյների տոկոսների իջեցում, տրված աշխատանքների լավագույն կատարման ցուցանիշներ և այլն:

40. Առանձին աշխատանքների վարձատրությունը կատարվում է միության հետ համաձայնեցված, միացյալ շրջանային գնացուցակների համաձայն, վորպիսի գնացուցակը պարտադիր է աշխատանքների նորմալ պայմաններում և համապատասխան վորակի շինանյութեր ունենալու դեպքում, գնացուցակներից վոչ հարգելի պատճառներով շեղումներ կատարելը արգելվում է:

41. Մեխանիկական նորմաներով նախատեսած արտադրության պայմանների բացակայության դեպքում, յերբ հնարավոր չէ գնահատել աշխատանքը, կամ փոխել աշխատանքի այն պայմանները, վորոնք ազդում են աշխատանքի վրա ցածրացնելով այն, գնահատությունը կատարվելու յե Գ.Կ.Հ.-ի կողմից: ԳԿՀ-ն քննության է առնում և գնահատում է նաև այն աշխատանքները, վոր ձեռնարկության մեջ իբրև նորություն է կիրառվում և ստեղծում է աշխատանքի հատուկ պայմաններ՝ որինակ ռացիոնալացումը



այս կամ այն գործի, կազմակերպչական տեխնիկական բարելավումը և այլն, վորոնք բանվորի աշխատավարձը բարձրացնելու յեն:

42. Բոլոր նման դեպքերում Տնտմարմինը պետք է ստուգի գնացուցակում կատարված բոլոր փոփոխությունները, իսկ ԳԿՀ-ն իր հերթին պետք է արձանագրի այն պատճառները, վորոնց հետևանքով կատարվել է գնացուցակներում իջեցում կամ ավելացում:

ԳԿՀ-ի կատարած փոփոխությունները վերաբերվելու յեն միմիայն տվյալ աշխատանքին և վոչ թե ամբողջ շինարարությանը:

ԳԿՀ-ի կատարած փոփոխությունները կարող են տարածվել նաև բոլոր այն շինարարությունների վրա, յեթե ԳԿՀ-ն լինի միջ գերատեսչական կարգով (ամեն մեծ շինարարության ներկայացուցչի մասնակցությամբ) և միության ներկայացուցչի ներկայությամբ:

Աշխատանքներում առաջացած բոլոր աննորմալությունների մասին բանվորները պարտավոր են հայտնել վարչությանը, վերջինս այդ մասին, կազմելու յե արձանագրություն:

43. Տնտմարմինը և միությունը հավասար չափով պատասխանատու յեն այն գնացու-

ցակների ճիշտ կիրառման և շեղումների հա-
մար, վորոնք կազմված են շինարարությա
համար նաև շինանյութեր արտադրող ձեռ-
նարկությունների համար:

Միութենական կազմակերպությունները
սույն պայմանագրի համաձայն պարտավոր
են իրենց վրա վերցնել պայմանագրի ճիշտ
կիրառման պարբերաբար հսկողությունը
գնացուցակների կիրառմանը գործարաննե-
րում և շինարարություններում, տանել բա-
ցատրական աշխատանք բանվորական մաս-
սաների մեջ գնացուցակների նշանակությա
մասին և տեխնիկական նորմիրովկայի կա-
տարած դերի ու դիսցիպլինայի մասին
Կենտրոնացնի բանվորների ուշադրությունը
և ոժանդակությունը տեխնիկական նորմի-
րովկայի գործը ավելի ուժեղացնելու, ձեռն-
հաս և համապատասխան բանվորների ա-
ռաջքաշումը, հատկապես հարվածայինների
լրացնելու տեխ. նորմիրովկայի աշխատող-
ների թիվը, եր ժամանակին տեղեկացնե
վերադաս մարմիններին և Աշխժողկոմատի
վարչության պատճառով տեղի ունեցա
գնացուցակների խախտումների մասին
միջոցներ ձեռք առնել գնացուցակների դիս-
ցիպլինան ամուր հիմքերի վրա դնելու:

Աշխատ. արտադրողականության ու
հաշվետվությունը պահանջել չեն. որդան



երից, ապահովել հսկողությունը և եր ո-
անդակությունը այդ խնդրում: Ձեռք առ-
ել միջոցներ անմիջապես կանխելու շինա-
արության մեջ առաջացած ընդմիջումնե-
ը, վորոնք կասեցնում են արտադրության
նթացքը, աշխատանքի բոլոր բնագավառ-
երում: Միաժամանակ անհրաժեշտ է պար-
երաբար աշխատավարձի սահմանված նոր-
աները և ուսումնասիրության արդյունքնե-
ը օգտագործել, հետագայում աշխատա-
արձի խնդիրները կարգավորելու համար:

44. Աշխատանքների միացյալ գնացուցակ-
րում չնախատեսնված աշխատանքի գները
շակվում են Տնտմարմնի կողմից, ելնելով
վյալ աշխատանքների կարգի, բանվորների
իջին աշխատավարձից և արտադրանքի նոր-
աներից:

Համամիութենական միասնական նորմա-
րում չնախատեսնված արտադրական նոր-
աները (նորմիրովկի) և նրանց կարգը
սահմանվում են ըստ աշխատանքների բնույ-
թի և վոչ թե աշխատանք կատարող անձի
արգի. նորմաների չափը սահմանվում է
վագույն հարվածային բանվորների ար-
ադրանքի հիման վրա, կատարված խրո-
մետրաժի տվյալներով:

45. Յեթե աշխատանքի գոյություն ունե-
ղ պայմանները այնպես են դասավորված,



1200—2.

վոր ամենալավ բանվորը ինտենսիվ աշխա
տելու դեպքում չի կարողանում արդարաց
նել աշխատավարձի սահմանված նորման
այդ դեպքում նորմաները չեն փոփոխվում
այլ ԳԿՀ-ի վորոշմամբ բարձրացվում է
գները: Բարձրացված գնացուցակները պահ
պանում են իրենց գոյությունը այնքան ժա
մանակ, վորքան ժամանակ չարունակվի հի
ված առանձնահատուկ պայմանները: Գնա
ցուցակների ամեն մի նման բարձրացում
պետք է կատարել տեղում, նախորոք հարց
քննելուց հետո, յեթե աշխատանքի պա
մանները նորմալ են և բանվորը չի կարող
նումարդարացնել իր նորման, այդ դեպքու
գնացուցակների բարձրացում չի կատար
վում:

Յ. Թե աշխատանքի տեխնիկական կազմ
կերպչական պայմանները բարեփոխում են
աշխատանքի արտադրողականությունը ակ
սում է բարձրանալ անկախ բանվորի աշխա
տանքի պայմաններից, աշխատավարձի պա
մանները և նորմաները վերամշակվում
ԳԿՀ-ի միջոցով 6 ամսվա ընթացքում, ի
առանձին բարդությունների դեպքում,
ամսվա ընթացքում:

46. Յեթե բանվորի ձեռնարկությա
վորևէ բարեփոխություն է մտնում, վոր
բարձրանում է արտադրողականությու



գնացուցակի նորման այդ բանվորի նկատմամբ յենթարկվում է փոփոխության և տըրվում է բանվորին բացի փոխհատուցումից նաև վերջին յերեք ամիսների համար նոր գնացուցակի տարբերությունը, անկախ նրանից թե տվյալ բանվորը անհատորեն և թե բրիգադայի մեջ է աշխատում:

47. Այն դեպքում, յերբ աշխատանքները կատարվում են կոլեկտիվ կերպով (հարվածային բրիգադաներ, արտադրական կոլեկտիվներ և այլն) վարձատրության ընդհանուր նորմաները, վորոշվելու յեն ամեն դեպքում աշխատանքի բնույթի և կատարման մասերի համաձայն, հայտարարելով այդ մասին բանվորներին:

48. Հարմարություններ ստեղծելու, աշխատավայրը կահավորելու և գործիքները պատրաստելու համար կորցրված ժամանակի և աշխատանքի վարձատրությունը (վարչության գիտությամբ և կարգադրությամբ), հաշվելու յե առանձին, անկախ գործարքից իբրև ինքնուրույն աշխատանք համաձայն միջին աշխատավարձի:

49. Նորմաների և գնացուցակների առթիվ վարչության և բանվորների մեջ հարուցված կոնֆլիկտները լուծվելու յեն ԳԿՀ-ի կողմից: Մինչև կոնֆլիկտներ լուծելը, բանվորները իրավունք չունեն հրաժարվե-

լու աշխատանքից, յեթե նույնիսկ նրան
համաձայն էլ չլինեն տվյալ գնացուցակի
աշխատելու։

Ծանոթություն.— Այն աշխատան
ների վարձատրությունը, վորպես
բանվորը կատարել է և վարձատրո
թյան մասին կոնֆլիկտ հարուցելու ժա
մանակաշրջանում, ԳԿՀ-ին դիմում տա
լու որից, վճարվելու յեն նրան համա
ձայն ԳԿՀ-ի վորոշման, սակայն վոչ պ
կաս նրա գործը հանձնելու որը պայմ
նավորվածից, ԳԿՀ-ի վորոշումից հետ
նույնպես աշխատանքը վարձատրվել
յե համաձայն ԳԿՀ-ի վորոշման, թեկո
այդ վորոշմամբ ավելի ցածր վարձ հա
նի բանվորին, քան թե վարչությունն
սահմանել աշխատանքը հանձնելուց։

50. Այն վորակյալ բանվորները, վոր
պարբերաբար կատարում են նորմայից դու
զանազան տեսակի աշխատանքներ, վոր
թվում մեքենայացում մտցնելու վրա աշխ
տանքները նաև գործարքով աշխատան
նման աշխատանքի փոխադրվողները, ստ
նում են հետևյալ տարիֆային ցանցով՝

Տարիֆը.—7-րդ կարգ մինչև 20-ից տար.
» 5-6-րդ » » 15 »
» 3-4-րդ » » 10 »



Սակայն նման դեպքերում փոխադրվողների աշխատավարձը չպետք է բարձրանա մինչև փոխադրվելը նրա գործարքային աշխատավարձից, արհեստների ցուցակը և նրանց լրացուցիչ վարձատրության կոնկրետ չափը սահմանվելու յե վարչության կողմից նախորոք բանկոմի հետ համաձայնության գալով։

51. Գործարքով աշխատող այն բանվորներին, վորոնք նշանակում են նոր ստացված մեքենաները, ստանոկները, կամ նյութը փորձելու, այդ փորձի ժամանակաշրջանում վճարվելու յեն բանվորներին իր միջին աշխատավարձից վոչ պակաս։

52. Գործարքով աշխատանք բանվորին հանձնելու դեպքում, Վարչությունը պարտավոր է նախորոք բացատրել գործի բնույթը, չափը, գնահատությունը և աշխատանքի ժամանակի տևողությունը, վորպեսզի պահանջում է գործը։

Ցեխ տրված աշխատանքի գները գնացուցակով նախատեսնված չի յեղել, գները վորոշվելու յե ԳԿՀ-ի կողմից։

Ծանոթություն.— Բանվորները իրավունք չունեն հրաժարվելու տրված գործից, սակայն այդ հանգամանքը չի արգելում նրանց բողոքել ԳԿՀ-ի վորոշման դեմ։

53. Կառուցողների Արհմիության Կենտկո-
մի կողմից մշակված տարիֆային տեղեկա-
գրի համաձայն, պետք է վորոշել բանվորի
կատեգորիան, թե անհատորեն և թե բրիգա-
դայի մեջ աշխատելու դեպքում, վոչ ուշ քա
նրա ընդունվելու 7-րդ որը համաձայն կա-
տարվող աշխատանքի վորակի և վոչ թե աշ
խատանքը կատարող անձի վորակի:

Չի թույլատրվում բանվորի կատեգորիա
վորոշել բրիգադայի հայեցողությամբ: Եթե
վարչությունը 7 որվա ընթացքում չի վորո
չել նրա կատեգորիան, այդ դեպքում մինչ
բանվորի կատեգորիայի վորոշումը, բան
վորը ստանալու յե վարձատրություն ա
չափով ինչ նախկին աշխատավայրում ստա
ցել է:

54. Աշխատանքի հանձնումը և չափելը ա
պայմանորեն կատարվելու յե բրիգադա
ներկայացուցչի մասնակցությամբ: Չափ
լու և հանձնելու համար գործադրված ժա
մանակամիջոցի մասին պետք է հիշատակ
ստացողական- հանձնողական արձանագր
թյան մեջ և այդ ժամանակի համար տնտ
ական մարմինը վճարելու յե մասնակցող
միջին աշխատավարձի չափով:

Հանձման արձանագրությունը ստոր
գրվում է յերկու կողմից և.ա: Կատարվ



աշխատանքի արձանագրված հաշվի պատճեն
տրվելու յե բրիգադայի ներկայացուցչին,
առաջին իսկ պահանջի դեպքում:

Աշխատավորի որեկան տարիֆ դրույքը ա-
ռաջին կարգի համար սահմանվում է՝
ա) Բանվորի համար 1 ռ. 62 կոպ., իսկ ա-
ռաջի կարգի աշակերտների համար 85 կ.:
Աշխատավարձի բաշխումը կատարվում է
հետևյալ տարիֆային ցանցով՝

| Բանվորների համար | փոխհա-րաբեր. | աշակ. համ. կարգ | փոխհա-րաբեր. |
|---|---|---|---|
| 1. . . . . | 1,0-1,62 | 1. . . . | 1,0-86 |
| 2. . . . . | 1,25 | 2. . . . | 1,30 |
| 3. . . . . | 1,45 | 3. . . . | 1,60 |
| 4. . . . . | 1,60 | 4. . . . | 1,90 |
| 5. . . . . | 1,80 | | |
| 6. . . . . | 2,10 | | |
| 7. . . . . | 2.5 | | |

Ծանոթություն.—1. Աշակերտները
աշակերտական ցանցով տարիֆիկացիա-
յի յեն յենթարկվում միայն 2 տարվա
ուսման ընթացքում, սովորելու տևո-
ղությունը 3 տարի լինելու դեպքում,
վերջին տարում վճարումը կատարվելու
յե ընդհանուր բանվորական ցանցի հա-
մաձայն, այն հաշվով, վորպեսզի վեր-
ջին կիսամյակում ստանա մի կարգով

ցանց այն արհեստի կարգից, վորով նա գրանցվելու յե դպրոցը ավարտելուց հետո, բայց վոչ պակաս այն աշխատավարձից, վորը ստացել ե շինուսում:

2. Բոլոր շենքերի և վարչությունների աշխատող ծառայողների համար սահմանվում ե ամսական աշխատավարձ (պաշտոնական դրույքների ձևով):

55. Տնտմարմինը պարտավորվում ե գոյություն ունեցող խմբակների փոխարեն կազմակերպել միևնույն արհեստի բանվորներից բրիգադներ, բրիգադների ղեկավարությամբ: Բրիգադները նշանակվում են Տնտմարմնի կողմից:

Բրիգադիրները պարտավոր են աշխատել բրիգադայի մյուս անդամների հետ հավասար: Բրիգադիրների աշխատավարձը վճարվում ե իր գործարքի համար, համաձայն նրանց համար վորոշված կարգի: Տնտմարմինը պետք ե նշանակի բրիգադիրներ լավագույն բանվորներից, սոցմրցման մասնակցողներից և արտադրության բարձրացման արժեքավոր առաջարկություններ անողներից, կամ գյուտարարներից: Մեծ խմբերում, վոչ պակաս 40 հոգի ունեցող խմբերում նշանակվելու յեն ազատ բրիգադիրներ, վորոնք վարձատրվելու



Տնտմարմինների հաշվին կրտսեր տասնապետների չափով, սակայն վոչ պակաս նրանց նախկին միջին աշխատավարձից, վորպիսին մինչև ազատվելը ստացել ե բրիգադում:

Այն բրիգադիրները, վորոնք կազմված են կենտ. աշխատանքի ինստիտուտի դասընթացքները (ՑԻՏ) ավարտողներից, ավարտելուց հետո յերեք ամիս շարունակ պետք ե աշխատեն Տնտմարմնի կողմից նշանակված առանձին հրահանգչի ղեկավարությամբ: Յերեք ամիս լրանալուց հետո, վարչությունը նշանակում ե բրիգադայի միջից իբրև ղեկավար բրիգադիր, իսկ հրահանգչին նշանակում ե նոր ավարտած ցիտովցիների նոր խմբակների ղեկավար:

56. Աշխատավարձը վճարվելու յե ամսական յերեք անգամ, դեկադներով, համաձայնություն գալով բանկոմի հետ, ըստ վորում առաջին յերկու դեկադի համար տրվելու յե ավանս, օրավարձի դրույքի հաշվով, իսկ 3-րդ դեկադայի աշխատավարձը վճարելիս փակվելու յե վերջնական հաշիվը ամբողջ ամսի համար, համաձայն կատարած աշխատանքների:

Յեթե աշխատողի հանգստի օրը զուգադիպում ե աշխատավարձ վճարելու օրվա

հետ, այդ դեպքում նրանց աշխատավարձը պետք է տրվի հանգստյան օրվա նախօրյակին: Աշխատավարձը պետք է վճարել աշխատանքի ժամերին և աշխատանքի վայրերում ամեն մեկին առանձին-առանձին, անձամբ աշխատավարձի ցուցակներով:

Բրիգադներին, կոլեկտիվներին և արտադրական կոմմունաներին աշխատավարձ տրվում է կոլեկտիվ ձևով: Այդ ձևով վճարելը պետք է լինի աշխատողների ցանկությամբ և կամավոր կերպով, ամեն մեկի առանձին համաձայնությամբ: Տնտմարմինները պարտավոր են ամեն դեպքում անհատական հաշվառում կատարել աշխատանքի և աշխատավարձի:

57. Տնտմարմինները պարտավոր են տրամադրել բանվորներին համապատասխան գործիքներ և շինանյութ և սեփական գործիքներ չունենալու պատճառով գործի չընդունելը արգելվում է: Յեթե բանվորը աշխատում է իր սեփական գործիքներով Տնտմարմինը պարտավոր է բացի աշխատավարձից վճարել նաև առանձնապես գործիքներ մաշվելու համար դրամական փոխհատուցում: Փոխհատուցումը վճարվելու յե ամեն հինգ ամիսը մեկ անգամ, համաձայն կազմված ցուցակների:



## Բրակների և պրաստոյների վճարումը

58. Սահմանված աշխատավարձով բանվորը պարտավոր է կատարել լավ վորակի աշխատանք, վատ վորակի աշխատանքը, վորը առաջացել է բանվորի մեղքով, նա պարտավոր է նորից վերաշինել առանց առանձին վարձի, կամ վարձատրվել ցածր գներով համապատասխան աշխատանքների թերությունների:

Տնտմարմնից ստացված վատ գործիքներ, կամ շինանյութեր հայտնաբերելու դեպքում, վորի պատճառով կարող է գործը փչանալ կամ տուժել, բանվորը անմիջապես պետք է հայտնի Տնտմարմնին:

Վարչա-տեխնիկական անձինք, իրենց սխալ կարգադրությամբ յերբ պատճառ են դառնում անվորակ և վատ աշխատանք առաջանալուն, անձնապես նյութական պատասխանատվություն են յենթարկվում պատճառած վնասի համար, բացառությամբ այն դեպքերի, յերբ տեխնիկական անվտանգության պահպանման համար է տրված կարգադրությունը, կամ կապված է այն վորոշ վտանգի հետ: Նման դեպքերում աշխատանքի այն մասը, վորը անվորակ կճանաչվի վարձատրվելու յե սահմանված հատուկ գնացուցակներով:

Առանց վարչության կարգադրության անվորակ աշխատանք կատարելու և չինանյութերը փչացնելու դեպքում, վնասները պահանջվելու յեն համաձայն տուժերի ցուցակների:

Յեթե բանվորի հանցանքով փչացրած աշխատանքը նորից ոգտագործվում է ձեռնարկության կողմից, իբրև արժեքավոր աշխատանք, այդպիսին վճարվելու յե իջեցրած գնահատությամբ, հակառակ դեպքում համաձայն ԳԿՀ-ի վորոշման:

Նյութը փչացնելու վնասը պահանջվում և գանձվում է փչացնողից, սակայն այն վոչ ավել նրա տարիֆ-դրույքի ⅓-ից:

59. Բանվորի կամ բանվորների անփույթ խմբի վերաբերմունքի, տեխնիկական ներքին կանոնների խախտման, վարչության կարգադրությունները չկատարելու հետեվանքով առաջացած վնասների և դիտավորյալ ձևով աշխատանքը չկատարելու համար, աշխատավարձը չի վճարվում և հանցավորներին գործից հեռացնում են առանց լուծարքային նպաստի:

60. Աշխատավորը պարտավոր է անմիջապես հայտնել վարչությանը կամ ցեխկոմին պրոստոյի դեպքում, բացի այդ իրենից կախված բոլոր հնարավոր միջոցները պետք



է գործի դնի և նախազգուշացնի վարչության առաջ գալիք պրոստոյը կանխելու: Հակառակ դեպքում պրոստոյի համար չի վճարվում և բանվորը պետք է յենթարկվի պատասխանատվության համաձայն տուժերի ցուցակի:

61. Վարչությունը պարտավոր է միջոցներ ձեռք առնել պրոստոյները կանխելու, հակառակ դեպքում յերբ անխուսափելի յե, պարտավոր է բանվորներին փոխադրել ուրիշ աշխատանքի:

Վարչության պատճառով առաջացած պրոստոյների (յերբ անխուսափելի յե կամ ժամանակին կարգադրություն չի տրվել) համար հանցավորները յենթարկվում են պատասխանատվության, բացի այդ վճարում են իրենց անփութությունից առաջացած բոլոր վնասները:

62. Պրոստոյի դեպքում վճարվում է՝

ա) 3 որից վոչ ավել պրոստոյի համար միջին աշխատավարձի չափով.

բ) 3 որից ավել պրոստոյի դեպքում տարիֆային դրույքով, հաշվելով այն պրոստոյը սկսվելու դեպքում—րոպեյից:

63. Վատ յեղանակներին (անձրև և այլ մթնոլորտային տեղումներ և յերեվույթներ) յերբ բացոթյա աշխատանքը անհնար է լի-

նում, վարչությանը իրավունք է վերապահվում փոխադրել բանվորներին ծածկի տակ և տալ նրանց, համաձայն իրենց վորակի աշխատանք և վճարել տվյալ աշխատանքի գնացուցակով, սակայն վոչ պակաս տարիֆային դրույքից:

Փոխադրել ծածկի տակ և հանձնել այնպիսի աշխատանք, վորը չի համապատասխանում իրենց վորակին և վճարել միջին աշխատավարձի հաշվով: Ծածկի տակ աշխատելը հնարավոր չլինելու դեպքում, տնտմարմինը վճարելու չէ բանվորներին չաշխատած օրերի վարձը համաձայն տարիֆային դրույքի:

Ծանոթություն.—Աշխատանքը չարունակելու անհնար լինելը վորոշում է վարչությունը և համապատասխան արձանագրությամբ:

## ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

64. Պարգևատրվում են այն բոլոր բանվորները, վորոնք քանակական և վորակական ցուցանիշներով լրիվ կատարում են իրենց հանձնարարած աշխատանքի նորման:

Պարգևատրման չափը կախված է կատարած աշխատանքի քանակից, վորակից և տնտեսումից:



ա) Առանձին միավորներում շինանյութերի ծախսման մեջ տնտեսում մտցնելը:

բ) Պրաստոյների տոկոսի իջեցումը:

գ) Բրակի իջեցումը:

դ) Արտադրանքի վորակի լավացումը:

65. Վարչությունը պարտավոր է մինչև մայիսի մեկը ժամանակում գործարկումի հետ համաձայնեցնել պարգևատրման կանոնները, թված ցուցանիշների համաձայն և վոչ ուշ նույն ժամանակից կյանքում կիրառել:

Ծանոթություն.—Տնտմարմինը պարտավոր է պարգևատրել լավ աշակերտներին գործնական և թեորետիկ առարկաներն ու աշխատանքների առաջադիմության համար, արտադրության մեջ աշխատելուց վորակի և քանակի ցուցանիշների լրիվ նորման կատարելու դեպքում, լավ կարգապահության համար, գյուտարարության և արժեքավոր առաջարկների համար:

## ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

66. Տնտմարմինը պարտավոր է քննության առնել արտադրական խորհրդակցության և անհատ բանվորների առաջարկները 10 որվա

ընթացքում և հայտնել առաջարկի հեղինակներին վորոշման հետեվանքը:

67. Տնտմարմինը պարտավոր է... որը ընթացքում մշակել և համաձայնեցնել գործարկոմ–բանկոմի հետ հարվածայինների և սոցմրցման մասնակիցների աշխատանքի հաշվառման ձևը, վորպեսզի հնարավոր լինի այդպիսի հաշվառումը կատարել 193 թ. . . . . . . ամսից վոչ ուշ:

68. Գյուտարարների վորակը բարձրացնելու համար վարչությունը պարտավոր է հիմնել և կահավորել մինչև ....... ամիսը . . . . . . գյուտարարների անկյուն, բացի այդ վարչությունը պարտավոր է տեխնիքական և կազմակերպչական ոժանդակություն ցույց տալ գյուտարարներին:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԵՐԸ ՅԵՎ ՀԱՆԳԻՍՏԸ

69. *Արտաժամյա աշխատանքներ և հանգստի որերին աշխատելը չի թույլատրվում:*

Արտադրության անհրաժեշտ դեպքում թույլ է տրվում արտաժամյա աշխատանք, սակայն նախորոք համաձայնության գալով Տնտմարմնի և միության մեջ և ստանալով Աշխժողկոմատի թույլտվությունը այդ առթիվ: Արտաժամյա աշխատանքը վարձատրվում է հետեվյալ ձևով՝



ա) Աշխատավորը ստանալու յե արտաժամյա աշխատանքի առաջին յերկու ժամի համար ամեն մի ժամին իրեն տարիֆային դրույքի 1 և $\frac{1}{4}$ չափով:

բ) Գործարքով աշխատողները արտաժամյա աշխատելու դեպքում ստանալու յեն՝ առաջին յերկու ժամերի համար 1 և $\frac{1}{4}$ ժամվա իր տարիֆային դրույքը, իսկ հետեվյալ ժամերի համար ամեն մի ժամին մեկ և կես ժամվա իր տարիֆային դրույքի աշխատավարձի չափով:

Բացառիկ դեպքերում, յերբ աշխատավորը հնարավորություն չի ունենում իր հանգստի որը հանգստանալու, նրան թույլատրվում է առաջիկա 12 որերից մեկում մի որ ավելի հանգստանալ:

Չափավորված աշխատանք ունեցողները, վորպես կանոն ոգտվում են շարաթական հանգստի որերով:

Ծանոթություն. Աշակերտներին վոչ մի դեպքում չի թույլատրվում արտաժամյա աշխատանքներ տալ և հանգստի որերը աշխատեցնել:

70. Չափավորված բանվորական որն սահմանվում է ըստ սույն պայմանագրին կցված պաշտոնների ցուցակների: Տնտմար–

մինը պարտավոր է մի ամսվա ընթացքում կազմել և համաձայնեցնել բանկոմի հետ Ա... չափավորված բանվորական օր ունեցած աշխատավորների վերաբերյալ աշխատանքի կանոնները:

71. Երկու շաբաթվա արձակուրդի (12 բանվորական օր) հարցը, նոր ընդունվող բանվորի կողմից կարող է հարուցվել Տնտմարմնի առաջ միայն 11 ամիս անընդհատ աշխատելուց հետո:

Բանվորական տարին հաշվելու յե տվյալ Տնտմարմնի մոտ 12 ամիս ընդունված օրից աշխատելով:

Յերկրորդ անգամ արձակուրդ ստանալու հարցը կարելի յե հարուցել նախկին բանվորական տարում աշխատելուց հետո ևս 5 և կես ամիս լրիվ տվյալ Տնտմարմնի մոտ աշխատանքը շարունակելուց հետո.

Արձակուրդը, վորպես օրենք տրվում է օրացուցային տարվա սկզբին կամ վերջին, իսկ աշակերտներին տրվում է անպայման ամառվա ամիսներում: Առանձին դեպքերում կարելի յե տալ նաև տարվա ընթացքում, յեթե աշխատանքի բնույթը թույլ է տալիս արձակուրդ գնալու:

Ծանոթություն.— 1. Այնպիսի արձակուրդները, վոր Տնտմարմինը տալիս



է առանց աշխատավարձի պահպանման, նման դեպքերում աշխատանքների մեջ չի մտցվում, այլ մտցվում է աշխատանքի ընդհանուր ստաժի մեջ հերթական արձակուրդի իրավունք ձեռք բերելու համար:

2. Յեթե Տնտմարմինը փոխադրում է աշխատավորին ուրիշ աշխատավայր կամ Աշխժողկոմատի կարգադրությամբ նա փոխադրվում է այլ Տնտմարմնի մոտ աշխատելու, աշխատանքի ստաժը, վորը արձակուրդի իրավունք է տալիս, չի ընդհատվում:

Տնտմարմնի կողմից աշխատանքից արձակվածները, կամ իրենց կամքով հեռացողները 11 ամսից պակաս աշխատած լինելու դեպքում ստանալու յեն աշխատանքի փոխհատուցում իրենց ստացած աշխատավարձի 1/25 չափով, տվյալ Տնտմարմնի մոտ իրենց աշխատած ամբողջ ժամանակի համար, սակայն այն հաշվով, վոր տրված գումարը չգերազանցի նրանց միջին աշխատավարձի հաշվով 12 օրվա վարձից:

Այն աշխատավորները, վորոնք յերկրորդ աշխատանքի տարում նույն Տնտմարմնի մոտ [illegible] ամիս աշխատել. հեռացվում են («ա», «բ», «դ» կետերը 47-րդ հոդվածի Աշխօրենսգր-

քի), ինչպես և նրանք, վորոնք կկանչվեն զինվորական ծառայության, կամ կգործուղվեն սովորելու, ստանալու յեն արձակուրդի փոխարեն դրամական փոխհատուցում 12 որվա միջին աշխատավարձի չափով։ Այն աշխատավորները, վորոնք աշխատել են 5 և կես ամիս և հեռացվում են, բացի վերեվ հիշված պատճառներից այլ պատճառներով (ինչպես և իրենց կամքով հեռացողները), նաև նրանք, վորոնք 5 ամսից պակաս են աշխատել, անկախ հեռացման պատճառներից, ստանալու յեն իբրեվ արձակուրդի փոխհատուցում ամեն մի աշխատած ամսի համար մի որվա վարձատրություն։

72. Անչափահասները նույն Տնտմարմնի մոտ 5 և կես ամիս աշխատելուց հետո ձեռք են բերում մեկ ամսվա արձակուրդի իրավունք ամբողջ տարվա համար, չոգտագործած արձակուրդի դիմաց անչափահասներին դրամական փոխհատուցում է տրվում նրանց վճարված ամբողջ աշխավարձի 2/25-ի չափով։

Չափահաս դառնալու մոմենտին, յեթե նրանք հերթական արձակուրդ չեն ստացել, այդ դեպքում արձակուրդ տրվելու յե բացի սահմանված յերկու շաբաթվանը, նաև լրացուցիչ ամեն մի ծառայած ամսի համար և



մեկական որ, հաշվելով այն մինչև չափահաս դառնալու որը։

Ծանոթություն.—1. Վոչ նորմայով չբավարարված բանվորական որ ունեցող աշխատավորներին տրվելու յե լրացուցիչ արձակուրդ, համաձայն սույն պայմանագրին կցված ցուցակի։

2. Յերկու տարի անընդհատ աշխատող բանվորները հաշվելով 1930 թ. նոյեմբերի 1-ից, վորոնք աշխատել են շինանյութ արտադրող հիմնարկություններում ստանալու յեն բացի որենքով սահմանվածից նաև լրացուցիչ արձակուրդ 3 բանվորական որ, կամ փոխհատուցում 3 որվա աշխատավարձի չափով։

3. Այն բանվորները կամ տեխնիքական պերսոնալը, վորոնք լավագույն աշխատողներ են արտադրության մեջ (հարվածայիններ և սոցմրցման մասնակցողներ), վորոնք յերկար ժամանակ աշխատել են տվյալ հիմնարկ-ձեռնարկություններում և լավ վորակի աշխատանք են կատարել, արտադրական խորհրդակցություններում արժեքավոր առաջարկներ են մտցրել կամ գյուտարարության մեջ աչքի յեն ընկել, խրախուս-

վելու յեն վարչության կողմից, առաջին հերթին ուղարկվելու յեն տեխնիկ. ԲՈՒՀԵՐ սովորելու, հանգստյան տներ, կուրորտները, գործուղվելու են արտասահման վորակավորվելու և առաջին հերթին նրանք պետք է օգտվեն դեֆիցիտային ապրանքներից և այլն:

4. Անչափահասներին, վորոնք աշխատում են ծանր և վնասակար գործերում (վորոնք նախատեսված են օրենքով) տրվելու յե լրացուցիչ արձակուրդ 2 շաբաթով:

73. Տեխնիքական պերսոնալի արձակուրդ գնալու կարգը սահմանվում է վարչության կողմից, նախապես համաձայնության գալով գործարկոմի և Ճ.Տ.Մ.-ի հետ հետևյալ ձևով՝

Չչափավորված բանվորական որ ունեցող ճարտարապետ-տեխնիկ աշխատավորների համար սահմանվում է տարեկան յերեք շաբաթից մինչև մեկ ամսյա արձակուրդ (յելնելով նրանց աշխատանքի ծանրաբեռնվածությունից) ըստ սույնին կցված պաշտոնների ցուցակի:

74. 1931 թ. արդֆինպլանով նախատեսված աշխատանքի պաշտպանության վարկի սահմաններում, վարչությունը պարտավոր



է կատարել տեխնիքական անվտանգության, սանիտարական և աշխատանքի առողջապահության բոլոր ձեռնարկումները, համաձայն Աշխատեսչության և գործարանային վարչության կամ Շին. հիմնարկի միջև համաձայնեցրված և ստորագրված կարգով. վարչությունը պարտավոր է նաև մինչև . . . . . . . ամսի « »-ը տալ ամեն մի բանվորին 1-ական հատ սրբիչներ, սրբիչների յերկարությունը լինելու յե $^1/_{25}$ մ. տրվելու յե յերեք ամսից վոչ պակաս աշխատողներին:

Ծանոթություն.— Վարչությունը պարտավոր է լվացարանների մոտ ունենալ օճառ, կամ այդպիսին բաժանել բանվորներին:

75. Վարչությունը պարտավոր է մինչև . . . . . . . ամիսը շինարարության կից կամ գործարանի բակում հիմնել բժշկական առաջին օգնության կայան (առանձին շենքում), և կահավորել այդպիսին համապատասխան ինվենտարով-բացի այդ, ունե-փոխադրական միջոց, դժբախտ դեպքերի ժամանակ վիրավորներին կամ հիվանդներին կայանից կամ հանրակացարանից ամբուլատորիա կամ հիվանդանոց փոխադրելու համար:

Վարչությունը պարտավոր է մինչև . .

. . . . . . ամխը կազմակերպել բոլոր ցեխերում դեղատուփեր անհրաժեշտ դեղորայքով, հիվանդին շտապ բժշկական օգնություն հասցնելու համար:

76. Տնտմարմինը աշխատանքները ըսկըսելուն պես պարտավոր է ապահովել յեկվոր և իրենց պահանջով այլ տեղերից յեկած բանվորներին կահավորված բնակարանով (հանրակացարան և այլն), վորպիսիք կահավորվելու յեն սեղաններով, պահարաններով, մատրացներով, բարձերով, լվացարաններով: Ստեղծելու յե հնարավորություն պարբերաբար մաքրելու, հատակը լվանալու, ախտահանելու (միջատների բազմանալը կանխելու համար), սանիտարական և առողջապահական բոլոր հարմարություններով, մեծ շինարարություններում, ուր ապագա գործարանը և հարակից բնակելի շենքերը պետք է կառուցվեն մնայուն բանվորների համար միայն արդյունաբերական աշխատանքների սկսվելը, բոլոր կառուցված բնակարանները պետք է տրամադրվեն կառուցող բանվորներին մինչև շինարարության ավարտելը:

Բնակելի շենքերի մի մասը պետք է հատկացնել ընտանիքավոր վորակյալ դեֆիցիտային արհեստների բանվորներին և նրանց



վորոնք յերկար ժամանակ կապված են տըվյալ շինարարության հետ:

Բոլոր դեպքերում բնակարանները բաշխելիս, բացի զուտ ամառային ժամանակավոր բնակարաններից, վրաններից և բարակներից կարող է սահմանվել բնակարանային վարձ և կոմունալ ծախքերը զբաղեցրած բնակարանների համար, համապատասխան աշխատավարձի չափի (դիֆերենցիալ հարաբերությամբ) համաձայն ՀԱՄԿԽ-ի և համամիութենական ԺՏԳԽ-ի 1929 թ. օգոստոսի 5-7 կարգադրության:

### Աշակերտներին բնակարան տրամադրվում է ձրիաբար

Տնտմարմինը և պրոֆմիությունը պարտավոր են խրախուսել յերիտասարդ բանվորության ձեռնարկությունը օրինակելի ցուցադրվեն, հանրակացարանները և կոմմունաներ կազմակերպելու խնդրում Տնտմարմինը պարտավոր է առաջին հերթին տրամադրել նրանց կահավորված բնակարաններ, հոգալով կահավորման հետ կապված ծախքերը և այլն:

Բացի այդ, Տնտմարմինը պարտավոր է 1931 թ. պահանջվող բնակելի շենքերի 20 տոկոսը կառուցել մշտական տիպի բնակարաններ:

Ծանոթություն. 1. Տնտմարմնին պատկանող բնակարանների բաշխումը տարվելու յե վարչության և գործարկոմ–բանկոմի փոխադարձ համաձայնությամբ, ըստ որում բնակարաններ առաջին հերթին տրվելու յե հարվածային բանվորներին, յերկար ժամանակ տվյալ շինարարությունում աշխատողներին, նրանց, որոնք ինքնամրացման կարգով աշխատելու յեն մինչև 5–ամյակի վերջը:

2. Յեթե ամառային տիպի շենքեր են տրվում բանվորներին—բարակներ, վրաններ չտաքացնող շենքեր, կոմունալ ծախքեր և բնակարանի վարձ չի գանձվում նրանցից:

77. Իրենց կամքով հեռացողները կամ ներքին կանոնների խախտման պատճառով հեռացվածները պարտավոր են 5 օրվա ընթացքում ազատել բնակարանը:

Ծանոթություն. Այն աշխատավորները, որոնց խնամքի տակ ապրում են անչափահասներ, կամ ծերացածներ, կարելի յե 5 օրվա փոխարեն թույլ տալ 15 օրից հետո ազատելու բնակարանը:

78. Շինարարության և արդյունաբերության մեջ աշխատող բանվոր– ծառայողներին արտահագուստ տրվելու յե համաձայն սրան կցված ցուցակի:

Արտահագուստը հիմնարկության սեփականությունն է, նույնիսկ մաշվելու դեպքում պետք է վերադարձնել: Գործից հեռացվելու ժամանակ բանվորը պարտավոր է վերադարձնել արտահագուստը ձեռնարկությանը, մինչև հին արտահագուստը չվերադարձնի նորը չի տրվելու:

Արտահագուստ յուրացնողները յենթարկվում են պատասխանատվության և արժեքը գանձվելու յե յուրացնողից շուկայի գներով, այդ մասին առաջ յեկած վեճերը քննվելու յեն ԳԿՀ-ի միջոցով:

Ծանոթություն. Աշակերտները ստանալու յեն արտահագուստ չափահաս բանվորների հետ համահավասար, այն արհեստների նորմայով, որի համար նրանք պատրաստվում են:

79. Գործարաններում կամ ձեռնարկություններում առաջացած դժբախտ պատահարներից մեռած բանվորի ընտանիքին վարչությունը պարտավոր է տալ նպաստ, մեռածի միջին աշխատավարձի հաշվով մեկ ամսվա համար, ապահովագրական գանձարկղի տրված նպաստից անձանց իրենց հայեցողության:

80. Քաղաքներից դուրս գտնվող այն կա-

ռուցումներում և գործարաններում, ուր բացակայում են հասարակական բաղնիքներ, Տնտմարմինը պարտավոր է հիշյալ շինարարության վրա զբաղված աշխատավորներին ապահովել բաղնիսով, ընդ վորում բաղնիսի օգտագործման պայմանները պետք է այնպես դասավորել, վորպեսզի աշխատավորի խնամքի տակ գտնվող ընտանիքի անդամները ևս հնարավորություն ունենան օգտվելու բաղնիքից:

Ծանոթություն. Բոլոր աշակերտները և անչափահասները օգտվելու յեն կոմունալ ծառայություններից բաղնիք, լվացքատուն և այլն):

81. Հանրակացարանի փոխարեն դրամական հատուցում տալը չի թույլատրվում:

82. 500-ից ավելի բանվորներ ունեցող մեծ ձեռնարկություններում և շենքերում Տնտմարմինը պարտավոր է իր հաշվով պահելու հատուկ աշխատակից ազատված բոլոր կողմնակի աշխատանքներից, տեխնիքական անվտանգության հսկողության համար, վորը պետք է լինի տեխնիքական կրթությամբ:

Սոցկենցաղային խմբակի ներկայացուցիչները տեղկոմի պահանջով կարիք յեղած ժամանակ ազատվելու յեն աշխատանքից



աշխապաշտպանության և տեխնիքական անվտանգության հարցերը քննելու համար, ընդհանուր առմամբ վոչ ավելի մեկ հոգուց ամսվա մեջ մեկ որ: Այդ որերի համար Տնտմարմինը վճարելու յե ազատվածին իր միջին աշխատավարձի հաշվով:

## ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՏԵՂԿՈՄԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

83. Տվյալ ձեռնարկության մեջ միութենական աշխատանքներ կատարելու և միութենական մարմինը պահպանելու համար Տնտմարմինը պարտավոր է հատկացնել բանվոր-ծառայողներին վճարած ամբողջ աշխատավարձի 1 տոկոսի չափով և բանվորների մեջ կուլտ-կրթական աշխատանքներ տանելու համար հատկացնել 1 տոկոսի չափով ընդամենը՝ 2 տոկոսի չափով, ռոճիկները վճարելուց հետո, վոչ ուշ 3 որից բանկոմի ընթացիկ հաշվին մուծելով:

84. Բացի թված ծախսերից, Տնտմարմինը տրամադրելու յե նաև առանց վարձի տեղկոմին մի սենյակ լրիվ կահավորված (գրասեղան, աթոռներ և այլն), վառելիք, լուսավորություն և հեռախոս: Բացի այդ նա ամիսը առնվազն մեկ անգամ ընդհանուր ժողովներ հրավիրելու համար:

Բացի այդ, թե շենքում և թե հանրակացարանում Տնտմարմինը պարտավոր է տրամադրել տեղկոմին հատուկ շենք, կահավորված լուսավորությամբ և վառելիքով, մասսայական և խմբակային պարապմունքների համար: Շենքի նորոգությունը պարտավոր է կատարել Տնտմարմինը պահանջվելու դեպքում: Վարձով վերցրած հանրակացարանների հետ Տնտմարմինը վարձելու յե նաև կարմիր անկյան սենյակ:

85. Խորհրդային, կուսակցական, կոմերիտական և այլ հասարակական մարմինների կողմից հրավիրված համագումարներին, կոնֆերենսներին, պլենումներին, և լիագումարական ժողովներին մասնակցելու համար ընտրված բոլոր պատգամավորների աշխատավարձը նրանց տեվողության ամբողջ ժամանակամիջոցում վճարելու յե Տնտմարմինը, ընտրված պատգամավորների միջին աշխատավարձի հաշվով:

Բրիգադի միջի ընտրված բանվորների (Տնտմարմնի և միության փոխհամաձայնությամբ) նույնպես վճարվելու յե միջին աշխատավարձի հաշվով, բրիգադայի մեջ աշխատելու ժամանակամիջոցի համար:



# Մ Ա Ս 12

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՏԵԽՆԻԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

86. Հավաքական պայմանագրի սույն մասը տարածվում է ճարտ.-տեխ. բոլոր տեսակի պաշտոնյաների վրա, Ճ. Տ. աշխատավորների տարիֆային տեղեկատույով նախատեսված բոլոր պաշտոնների աշխատակիցների վրա: Նաև սույն պայմանագրին կցված ցուցակում նախատեսված պաշտոնների վրա:

Ծանոթություն.— Վարչա-տեխնիկական ղեկավարող պաշտոնների համար (աշխղեկ և բարձր պաշտոններ) թեկնածուներ է առաջարկում միությունը, ըստ վորում նրանց ընդունելու վերջնական վորոշումը թողնվում է Տնտմարմնին:

87. Ճարտ.-տեխ. աշխատավորներին աշխատանքից հեռացնելու դեպքում համաձայն աշխօրենսգրքի 47-րդ հոդվածի «ա» և «բ» կետերի պետք է նախազգուշացնել գրավոր կերպով մի ամիս առաջ, իրենց ցանկությամբ

հեռանալու դեպքում ճարտ.-տեխ. աշխատավորը պարտավոր է մի ամիս առաջ հայտնել վարչությանը գրավոր ձևով, միաժամանակ վարչությունը այդ մասին պետք է հայտնի Աշխժողկոմատին:

Ծանոթություն.— Այն դեպքում, յերբ հանձնարարված աշխատանքները կիսավարտ են կամ դեռ չեն հանձնված, տնտմարմինը կարող է ՃՏՍ-ի համաձայնությամբ հետաձգել հեռացումը, մինչեվ գործի վերջնական ավարտումը:

88. Ճարտ.-տեխնիկական աշխատանքների վարձատրության չափը սահմանվում է Կառուցողների Կենտկոմի 1930 թ. հրատարակած տարիֆային տեղեկատույով, համաձայն նրանց տարիֆային ցանցի, հարաբերականով 1,4 հետևյալ համեմատական կարգերով՝

| ԿԱՐԳ | ԿՈԵՑ. | ԿԱՐԳ | ԿՈԵՑ. |
|---|---|---|---|
| 1. . . | 1,0—125 ռ. | 9. . . | 9,00 |
| 2. . . | 1,10 | 10. . . | 2,20 |
| 3. . . | 1,20 | 11. . . | 2,40 |
| 4. . . | 1,30 | 12. . . | 2,60 |
| 5. . . | 1,40 | 13. . . | 2,85 |
| 6. . . | 1,55 | 14. . . | 3,15 |
| 7. . . | 1,70 | 15. . . | 3.50 |
| 8. . . | 1,85 | 16. . . | 4,00 |

Ինժ.-տեխ. աշխատավորների տարիֆա-



յին կարգի ամսական աճիկը սահմանվում է 125 ռ.: Կարգերի բաժանումը ըստ պաշտոնների կատարվում է Տնտմարմնի կողմից: Կարգերի բաշխման առաջացած կոնֆլիկտները քննում է ԳԿՀ-ն հրավիրելով ճարտ. տեխ. սեկցիայի ներկայացուցչին:

Այն պաշտոնները, վոր չի նախատեսված կառուցողների Կենտկոմի կազմած հարցացուցակի մեջ, այս կամ այն ճարտ. տեխ. համար վորոշում է ԳԿՀ-ն համապատասխան տվյալ անձի աշխատանքի բնույթի զուգելով նրան տարիֆ-տեղեկատույով նախատեսված պաշտոններից մեկի կարգում:

89. Տեխնիկական արտադրական և տնտեսական նվաճումների համար ճարտ. տեխ. աշխատավորները ստանում յեն 1929 թ. 1/1 հրահանգի համաձայն կարգով:

90. Ճարտ. տեխ. աշխատավորների ընդունելությունը, տեղափոխելը և աշխատանքից հեռացնելը կատարում է վարչությունը, հայտնելով այդ մասին գործարկոմին և ՃՏՍ-ին:

Վարչությունը պարտավոր է ՃՏՍ-ին համաձայնեցնել ճարտ. տեխնիկական ուժերին առաջնային կարգով դասավորելը այս կամ այն պաշտոնում:

ՃՏՍ-ն իր հերթին պարտավորվում է ա-

4200—3.

ջակցել Տնտմարմնի ճար. տեխ. կադրերը համապատասխան ձևով օգտագործելու համար:

Վարչությունը, գործարկոմը և ՃՏՍ-ն պարտավոր են պարբերաբար պայքարել բանուժի և ճարտ. տեխ. հոսունության դեմ:

91. Ճարտ. տեխնիկների արձակուրդները սահմանում է վարչությունը վերջնականապես միության հետ համաձայնության գալուց հետո հետևյալ ձևով՝

ա) Չհաստավորված բանվոր ունեցող, վոչ նորմայով աշխատող ճարտ. տեխնիկներին Միության և Տնտմարմնի համաձայնությամբ տրվելու յե, համաձայն արձակուրդ գնացողի բեռնվածության, 3 շաբաթից մինչև մեկ ամիս, հաշվելով նրա մեջ իր հերթական արձակուրդը ևս:

բ) Ցեխի պետը, վարպետները, օգնականները և առողջության համար վտանգավոր պայմաններում աշխատելու դեպքում, ստանում են վտանգը չեզոքացնող միջոցներ և արձակուրդ նույն ցեխի բանվորների հավասար:

92. ՃՏՍ-ի աշխատանքներում նորմալ պայմաններ ստեղծելու համար վարչությունը մինչև 1-ը մայիսի ժամանակամիջոցը պարտավոր է իրեն հաշվին տրամադրել



նրանց աշխատանքի սենյակ, կահավորված, լուսավորությամբ և վառելիքով, իրեն վրա վերցնելով նաև այդ սենյակի պահպանելու և պարբերաբար մաքրելու ծախքերը:

Ճարտ. տեխ. աշխատավորներին թույլատրվում է իրենց ազատ ժամերին օգտվել արտադրական գիտական փորձերով, արխիվներից, թանգարաններից և լաբորատորիաներից, այն պայմանով, վոր իրենց նորմալ աշխատանքները չտուժեն:

93. Ճարտ. տեխ. վորակի բարձրացման համար Տնտմարմինը պարտավոր է՝

ա) Գործուղել նրանց լրացուցիչ կերպով վերավորակավորելու համապատասխան դասընթացքներ, տեղական ՃՏՍ-ի հետ համաձայնություն գալով վերապատրաստման ուղարկվելիք թեկնածուների թվի և անձնավորությունների մասին:

բ) Բաց թողնված գումարների սահմաններում իր հաշվին գործուղել միության չինարարական զանազան վայրեր, գիտական էքսկուրսիաներ կատարելու համար:

գ) Իր հաշվին գործուղել ճարտ. տեխնիկներին գիտական տեխնիկական համագումարներին և խորհրդակցություններին մասնակցելու, բոլոր նման գործուղումների

ժամանակ գործուղվածի միջին աշխատա-վարձը պահպանվում է:

դ) Կազմակերպել տեխնիկական գրադա-րաններ և գոյություն ունեցածները նոր տեխնիկական գրքերով լրացնել, փոխադրել ճարտ. տեխնիկներին ազատ այդ գրադա-րաններից:

ե) Թույլ տալ ճարտ. տեխ. աշխատավոր-ներին իրենց ազատ ժամերին օգտվել ձեռ-նարկությունում յեղած գրադարաններից, լաբորատորիաներից և արխիվից:

Ճարտ. տեխնիկների մեջ պրոֆաշխա-տանք տանելու համար ձեռնարկությունն ամսական 8 ժամով պետք է ազատի այն ժամանակներին, որին ՃՏՍ-ն ցույց կտա:

ՃՏՍ-ն միության հետ միասին պարտա-վոր է աշխատանքներ տանել ճարտ. տեխ. ամրացնելու աշխատանքներին մինչև շինու-թյան ավարտելը, կամ հիմնական վերջը: Բացի այդ համապատասխան միջոցներ է հատկացնում ճարտ. տեխնիկ աշխատավոր-ներին պարգևատրելու, յեթե նրանց կողմից ռացիոնալիզացիան արժեքավոր առաջարկներ է յեղել:



# Մ Ա Ս 13

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀՈԴՎԱԾՆԵՐ

94. Տնտմարմինը պարտավոր է մշակել ներքին կարգապահության կանոններ յել-նելով տեղական պայմաններից, մտցնել հա-մապատասխան լրացումներ, որից հետո համաձայնեցնել միության հետ: Ներքին կարգապահության նախատեսված պայ-մանները կյանքում կիրառելու յեն Աշխժող-կոմատի կողմից հաստատվելուց հետո:

95. Սույն պայմանագրի տպագրման հետ կապված բոլոր տեսակի ծախսերը կատար-վելու յեն Տնտմարմնի հաշվին, բացի դրա-նից Տնտմարմինը պարտավոր է սույն պայ-մանագրից փոքրիկ գրքույկների ձևով տպ-ագրել 500 օրինակ ռուսերեն և հայերեն լեզվով բաժանել բոլոր բանվորներին ձրի 300 Ալլահվերդի և 200 Ղափանի: Ձեռք բե-րել գնացուցակները բրոշյուրի ձևով ան-հրաժեշտ քանակությամբ և բաժանել ամեն մի բրիգադայի ներկայացուցչի համար մե-կական օրինակ:

Վճարել պայմանագրի կնքելու և լրացնե-լու բոլոր ծախսերը:

96. Իրավական կողմերը հանդիսանում են՝ Միություն, Յերևան, Կառուցողների

կենտվարչություն, *Ալլահվերդի* № 25 բանկոմ, *Ղափան* № 46 բանկում, Տնտմարմինը—Զակմեդկոմբինատը, Ալլահվերդի, Ղափան:

*Հիշյալ հասցեներով ստացված բոլոր թղթակցությունները համարվում են հանձնված:*

*Միության ներկայացուցիչներ՝*
*կենտվարչության անդամ՝*
**ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

№ 25 *բանկոմի նախագահ՝* **ՂԱԶԱՐՅԱՆ**
№ 46 *բանկոմի նախագահ՝* **Լ. ՂԱԶԱՐՅԱՆ**
*Զակմեդկոմբինատ՝* **ԾԱՏՈՒՐՅԱՆ**

28 *հունվարի* 1931 *թ.*

*Ալլահվերդի*

*Տոմարագրվում է* № 4

Ալլահվերդու շրջ. Աշխ. տեսուչ՝



## ՑՈՒՑԱԿ

վտանգավոր աշխատանքներում աշխատող բանվոր-ծառայողների, վորոնց տրվում լրացուցիչ արձակուրդ (հավաքական պայմանագրի կետ)

### 1. ԹՈՒՆԵԼՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ (Բուրիլշչիկի)

1. *Զավոլնիկներ*
2. *Կրեպլիշչիկներ*
3. *Զապալշչիկներ*
4. *Ատկատչչիկներ (Ոտկաչչիկի)*
5. *Թունելում աշխատող այլ բանվորներ:*

### 2. ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՎՐԱ ԱՇԽԱՏՈՂ ՇՈՖԵՐՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՈԳՆԱԿԱՆՆԵՐԸ

### 3. ԳԱԶԻ ՅԵՎ ԿՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

1. *Սղոցարանների վրա աշխատողները*
2. *Բեռնող և դատարկող բանվորները*
3. *Պահեստներում աշխատող բանվորները:*
4. *Գաջի գործարանների վարպետները:*

## 4. ԳՐԱՆԻՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Գերֆրատորների վրա աշխատող բանվորներ։

2. Մեխանիզացիայի ենթարկված ստանոկների վրա աշխատող բանվորներ (բրուսչատկաներ կարող)։

3. Մեքենայական գործիքներով բրուսչատկաներ աշխատող բանվորներ։

4. Մեքենայացման ենթարկված արհեստանոցներում աշխատող բանվորներ։

## 5. ՑԵՄԵՆՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՇԽԱՏՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐ

1. Աղացող բանվորներ

2. Պտտվող վառարանների վրա այրող բանվորներ։

3. Բեռնող բանվորներ, , վորոնք մշտապես զբաղված են շախտային և գոյնեկյգեր վառարանների վրա, կրաքար։

4. Գոֆման-Բերլեցի վառարաններում դասավորող բանվորներ։

## 6. ՌՈՄԱՆԱԿԱՆ ՑԵՄԵՆՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Շախտինակի վառարանի բեռնող և թափող բանվորներ։



2. Կեսոնի աշխատանքների (աշխատանք ջրի մեջ) վրա զբաղված բանվորներ։

3. Բանվորներ, վորոնք զբաղված են ներկարարային աշխատանքներում (մետաղի, փայտի կամ շինանյութի վրա) և յեթե գործածվում են ալեյցովի ներկ։

## 7. ԳԻԴՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Այն արհեստի բանվորների, վորոնք աշխատում են իրենց գործիքներով և վորոնց գործիքների մաշման համար տրվում է դրամական փոխհատուցում հետեվյալ չափով՝ (կես հոդ.)

| | | |
|---|---|---|
| 1. Վորմնադիր—քարտաշ | – –1 | տոկոս |
| 2. Վորմնադիրներին . . . | 1/2 | » |
| 3. Քարտաշներին . . . . | 1/5 | » |
| 4. Սվաղչիներին . . . . | 1/4 | » |
| 5. Ներկարարներին . . . | 1/2 | » |
| 6. Թիթեղագործներին . . | 1/2 | » |
| 7. Ասֆալտագործներին . . | 1/4 | » |
| 8. Քարհանքի քար կտրող բանվ. | 1 1/2 | » |
| 9 Շեբեն ջարդողներին . . | 1/2 | » |
| 10. Ապակի կտրողներին . . | 1 | » |
| 11. Թպարչիներին . . . . . | 1 | » |
| 12. Վառարանագործներին . . | 1/4 | » |

| | | տոկոս |
|---|---|---|
| 13. Փականագործներին և ջրմուղ անցկացնողներին . . . | 1½ | » |
| 14. Դարբիններին . . . . | 1½ | » |
| 15. Արմատուրշչիկներին . . | 1½ | » |
| 16. Հյուսներին . . . . . | 1½ | » |



# ՑՈՒՑԱԿ

## Չչափավորված աշխատանքի որ ունեցող աշխատակիցների

1. Աշխատանքի ղեկավարները և նրանց օգնականները.
2. Գլխավոր ճարտարապետները և նրանց օգնականները.
3. Արտադրության վրա գրաված բոլոր ճարտ.–տեխնիկները.
4. Բոլոր բաժինների և յենթաբաժինների վարիչները և նրանց օգնականները.
5. Գլխավոր հաշվապահները և նրանց օգնականները.
6. Հաշվապահները.
7. Տնտեսպետ–վիճակագիրները.
8. Պահեստների վարիչները.
9. Եքսպեդիտորները.
10. Արտելշչիկները (շրջիկ գանձապահ-ները).
11. Շոֆերները և նրանց օգնականները:

# ՑՈՒՑԱԿ

Այն աշխատակիցների, վորոնք ոգտվում են լրացուցիչ արձակուրդ ստանալու իրավունքով․

1․ Դիրեկտոր— տարեկան 1 ամսվա արձակուրդ․
2․ Նրա ոգնականը նույնպես— 1 ամսվա․
3․ Արտադրական բաժնի վարիչը— 1 ամսվա․
4․ Գլխավոր ճարտարապետը— 1 ամսվա․
5․ Ցենթարաժնի վարիչները— 1 ամսվա․
6․ Գլխավոր հաշվապահները և նրանց ոգնականները— 1 ամսվա․
7․ Հաշվապահներին— բանվորական որ— 18 բանոր․
8․ Աշխղեկներին— 1 ամսվա․
9․ Աշխղեկների ոգնականներին (վարչատնտեսական մասի վարիչներին— 1 ամսվա․
10․ Արտադրության վրա անմիջականորեն զբաղված ճարտարապետ–տեխնիկներին— 1 ամսվա․ իսկ մալարիայի շրջանում 1½ ամսվա․
11․ Մեքենագրուհիներին— 18 բանոր․
12․ Պահեստապետ – եքսպեդիտորներին— 18 բանոր․
13․ Շոֆերներին, ավտոկառավարներին և ոգնականներին—1 ամսվա․
14․ Կառապաններին— 18 բանոր․
15․ Ցեխա–ավագ մեծակարգներին— 1 ամսվա․
16․ Արտեղշեֆներին (շրջիկ դանձապահ)— 18 բանոր․
17․ Եքսպեդիտորներին— 18 բանոր․
18․ Պահեստի վարիչներին— 18 բանոր
19․ Իրավախորհրդատուներին— 18 բանոր․
20․ Տնտեսական [illegible] ներին— 18 բանոր․

ՀՍԽՀ ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ—ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0201924

331.11
U-89